ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 12. Հայաստանի անրապետության ազգային անվտանգության մարմինների պահեստազորից, զինված ուժերից (այդ թվում՝ պահեստազորից) և այլ զորքերից ու այլ մարմիններից ազգային անվտանգության մարմիններ ծառայության ընդունված (տեղափոխված) և սպայական պաշտոնի նշանակված ծառայողներին հերթական կոչման ներկայացնելու ~~ժամկետները~~ *կարգը*

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների պահեստազորից, զինված ուժերից (այդ թվում՝ պահեստազորից) և այլ զորքերից ու այլ մարմիններից ազգային անվտանգության մարմիններ ծառայության ընդունված (տեղափոխված) և սպայական պաշտոնի նշանակված ծառայողները հերթական կոչման ներկայացվում են կոչումը կրելու ՝ ***սույն օրենքով*** սահմանված ժամկետը լրանալուց ~~և ազգային անվտանգության մարմիններում ստորև բերված ժամկետներում ծառայելուց հետո.~~ ***հետո:***

~~Կոչումը~~	~~Պահեստազորից (այդ թվում՝ ազգային անվտանգության մարմինների պահեստազորից)~~	~~Զինված ուժերից, այլ զորքերից և այլ մարմիններից~~
~~Լեյտենանտից՝ կապիտանը ներառյալ~~	~~6 ամիս~~	~~3 ամիս~~
~~Մայորից՝ գնդապետը ներառյալ~~	~~1 տարի~~	~~6 ամիս~~

2. Ազգային անվտանգության մարմինների պահեստազորից, զինված ուժերի պահեստազորից ազգային անվտանգության մարմիններ ծառայության ընդունված սպաների՝ տվյալ կոչումով ծառայության ժամկետում հաշվարկվում է պահեստազորում ստացած կոչումը կրելու ժամանակահատվածը:

~~3. Զինված ուժերից և այլ զորքերից ու այլ մարմիններից օրենքով սահմանված կարգով ազգային անվտանգության մարմիններ ծառայության տեղափոխված ծառայողներին հերթական կոչումը շնորհելիս հաշվի է առնվում նաև զինված ուժերում կամ այլ զորքերում կամ այլ մարմիններում տվյալ կոչումով զինվորական կամ այլ ծառայության ժամկետը:~~

3. Զինված ուժերից, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, փրկարար ծառայությունից և Հայաստանի Հանրապետության պետական

պահպանության ծառայությունից օրենքով սահմանված կարգով ազգային անվտանգության մարմիններ ծառայության տեղափոխված, ինչպես նաև տվյալ մարմիններում ծառայած և ազգային անվտանգության մարմիններ ծառայության ընդունված ծառայողներին հերթական կոչումը շնորհելիս հաշվի է առնվում նաև զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում, փրկարար ծառայությունում և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունում տվյալ կոչումով ծառայության ժամանակահատվածը:

Հոդված 14. Ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները

1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարող է ընդունվել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան (բացառությամբ տեղափոխվածների) այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած այն ~~անձանց~~ ***անձի***, ~~ովքեր~~ **ով** ուսման ընթացքում անցել ~~են~~ ***է*** զինվորական պատրաստություն և հանձնել սահմանված քննությունները, հաշվառվել պահեստազորում) կամ օրենքով սահմանված հիմքերով և կարգով ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից և չունի օրենքով սահմանված վերափորձաքննություն անցնելու պարտականություն, տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ազգային անվտանգության մարմինների ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

~~Ազգային անվտանգության մարմինների առանձին պաշտոններում ծառայության անցնելու համար լիազոր մարմնի ղեկավարի թույլտվությամբ բացառիկ դեպքերում կարող են ծառայության ընդունվել 30-ից ավելի բարձր տարիք ունեցող քաղաքացիներ:~~

Լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում և հատուկ ստորաբաժանումներում, ինչպես նաև կառուցվածքային այլ ստորաբաժանումների՝ մասնագիտական հատուկ գիտելիքներ, հմտություններ և ունակություններ պահանջող պաշտոններում նշանակվելու համար ծառայության կարող են ընդունվել 30-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիները:

2. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության, ուսումնասիրման կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

3. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է ~~հանցագործություն~~ ***հանցանք*** կատարելու համար, ***բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի.***

4) չի համապատասխանում սույն հոդվածի առաջին մասով սահմանված պահանջներին, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

5) միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի:

4 Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում և հատուկ ստորաբաժանումներում ծառայության կարող է անցնել նաև այն քաղաքացին, որը դատապարտվել է անզգույշ հանցանք կատարելու համար և որի դատվածությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

Հոդված 15.1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողի վկայականը և անձնական գործը

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին տրվում է վկայական, որի նկարագիրը, ձևը, հատկացման և հաշվառման կարգը հաստատվում են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

2. Ազգային անվտանգության մարմինների ծառայողի վերաբերյալ ***թղթային եղանակով*** վարվում է անձնական գործ, որում արտացոլվում է նրա ծառայողական գործունեության ընթացքը: Անձնական գործի ձևը և վարման կարգը հաստատվում են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հոդված 16. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության ժամկետները

1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության համար սահմանվում են հետևյալ տարիքային սահմանափակումները.

Կոչումը	Ծառայության սահմանային տարիքը
Ավագ ենթասպայական կազմ *ենթասպա, ավագ ենթասպա*	52
Սպայական կազմ Կրտսեր սպայական կազմ *լեյտենանտ,* *ավագ լեյտենանտ, կապիտան*	52
Ավագ սպայական կազմ *մայոր, փոխգնդապետ,*	52 57

գնդապետ	
Բարձրագույն սպայական կազմ *գեներալ-մայոր*	65

2. Սահմանային տարիքի հասած ծառայողների՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայության ժամկետները տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգել մինչև 5 (ազգային անվտանգության մարմինների ուսումնական հաստատության դասախոսական կազմինը, բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող ծառայողներինը և ~~հետախուզական ու հակահետախուզական~~ ***հակահետախուզական ու սահմանապահ զորքերի հետախուզական*** ստորաբաժանումների՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ավագ սպայական կազմի ծառայողներինը՝ մինչև 10) տարի ժամկետով:

Հոդված 19. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

1. ***(մասն ուժը կորցրել է 22.12.23 ՀՕ-1-Ն)***

2. ***(մասն ուժը կորցրել է 22.12.23 ՀՕ-1-Ն)***

3. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, ովքեր մինչև ~~նշանակումը վերջին մեկ տարին~~ ***նշանակումն առնվազն մեկ տարի*** զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի ~~այլ~~ պաշտոն կամ ~~մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների~~ ***առնվազն երեք տարի՝*** ավագ խմբի որևէ պաշտոն:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել նաև ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է պետական լիազոր մարմնի համապատասխան ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից պետական լիազոր մարմնի ղեկավարին ներկայացված հիմնավոր զեկուցագրի հիման վրա, որը պարունակում է տվյալ ծառայողի գործնական և անձնական հատկանիշների, կարգապահության, ծառայակիցների հետ փոխհարաբերությունների, ծառայության ընթացքում ձեռքբերումների, խրախուսանքների, կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման որակի և մասնագիտական հմտությունների ու նրա կատարած աշխատանքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

5. ***(մասն ուժը կորցրել է 01.03.23 ՀՕ-40-Ն)***

6. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է բարձրագույն կրթության առկայության դեպքում:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

6.1. Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են ընդունվել և պաշտոնի նշանակվել նաև զինված ուժերի, ոստիկանության, պետական պահպանության ծառայության, փրկարար ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներ, դատախազներ, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ նշված մարմիններում և պաշտոններում նախկինում ծառայած կամ աշխատած անձինք), ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների նախկին ծառայողներ և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի ազգային անվտանգության ծառայությունում պաշտոն զբաղեցրած անձինք, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար ազգային անվտանգության մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջները:

6.2. Սույն հոդվածի 6.1-րդ մասով նախատեսված պետական մարմինների և ազգային անվտանգության ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ազգային անվտանգության մարմիններում ծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի:

Հոդված 25. Ազգային անվտանգության մարմինների ծառայողներին այլ պետական մարմիններ գործուղելը

Ազգային անվտանգության մարմինների ծառայողները, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, կարող են գործուղվել պետական այլ մարմիններ և կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության ~~կառավարության~~ ***վարչապետի կողմից*** սահմանած կարգով և պայմաններով:

Հոդված 26. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ հետևյալ դեպքերում.

1) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև 2 ամիս ժամանակով.

2) ***(կետն ուժը կորցրել է 25.03.21 ՀՕ-131-Ն)***

3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերից, այլ զորքերից կամ այլ մարմիններից ազգային անվտանգության մարմիններ տեղափոխելիս՝ մինչև 3 ամիս ժամանակով.

4) մեկ ամսից ավելի անհայտ բացակայելիս՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.

5) գերության մեջ գտնվելիս՝ մինչև ազատվելը.

6) հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին ծառայողի զբաղեցրած պաշտոնը կրճատվելիս՝ մինչև արձակուրդի ավարտը:

7) ***(կետն ուժը կորցրել է 11.12.23 ՀՕ-404-Ն)***

1.1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը կարող է թողնվել կադրերի տրամադրության տակ՝ իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում, հաշվի առնելով հանցանքի բնույթը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:

2.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ծառայողին վճարվում է ամսական հատուցում՝ նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի հիսուն տոկոսի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.2-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

3. Սույն հոդվածի առաջին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ծառայողի վարձատրությունն իրականացվում է նշված խոչընդոտները վերանալուց հետո, եթե պարզվում է, որ ծառայողի գործողություններում հանցակազմ չկա: Այդ դեպքում վարձատրությունն իրականացվում է կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար՝ զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի չափով:

4. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելիս կին ծառայողին տրվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վճարները:

5. Ծառայողը կադրերի տրամադրության տակ է վերցվում սույն հոդվածի առաջին մասում նշված հանգամանքներն ի հայտ գալու կամ դրանց մասին հայտնի դառնալու օրվանից: Ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու կարգը սահմանվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

6. Սույն հոդվածի ***1-ին*** մասի 1-ին կետով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ազգային անվտանգության մարմինները պարտավոր են ծառայողին՝ նրա ***անձնական և գործնական հատկանիշներին,*** կրթությանը և նախկինում զբաղեցրած պաշտոնի խմբին ~~կամ~~***, իսկ դրա բացակայության դեպքում՝*** դրանից մեկ աստիճան ցածր խմբին համապատասխանող պաշտոն

առաջարկել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու սահմանված ժամկետը լրանալուց հետո ծառայողը, սույն օրենքով սահմանված կարգով, արձակվում է ծառայությունից: ***<u>Համապատասխան պաշտոնի բացակայության դեպքում ծառայողն արձակվում է ծառայությունից առանց այլ պաշտոն առաջարկելու:</u>***

7. ***(մասն ուժը կորցրել է 11.12.23 ՀՕ-404-Ն)***

Հոդված 43. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի՝

1) կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, ~~մանկավարժական~~ ***<u>կրթական</u>*** և ստեղծագործական աշխատանքից***<u>, եթե դա չի խոչընդոտում ծառայողական պարտականությունների իրականացմանը</u>***.

2) ~~լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ.~~ ***<u>զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում.</u>***

3) ~~անձամբ~~ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

4) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

5) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ազգային անվտանգության մարմինների նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8) լինել որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական կազմակերպության անդամ.

9) պաշտոնական դիրքն օգտագործել ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության.

10) կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց:

11)

2. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ազգային անվտանգության մարմինների ծառայողը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտ:

3. Արգելվում է համատեղ ծառայել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ և պապ) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ անմիջական վերահսկողության հետ:

~~4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի ծառայությունից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության անդամ կամ աշխատող, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր ծառայության վերջին մեկ տարվա ընթացքում:~~

5. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին չի տրվում պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի տեղափոխման, ազատման, ծառայությունից արձակման կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանի քաղվածք, որից հանվում է պետական գաղտնիքը կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:

6. Ազգային անվտանգության մարմինների ծառայողներին պետական գաղտնիքներին առնչվելու թույլտվություն տրվում է «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը կարող է ուսումնական հաստատություններում սովորել իր մասնագիտությանը մոտ կամ բնույթով իր կատարած աշխատանքի գծով մասնագիտական գիտելիքների խորացմանը նպաստող մասնագիտություններով հեռակա ուսուցման ձևով՝ միայն պետական լիազոր մարմնի ղեկավարի թույլտվությամբ: Ազգային անվտանգության մարմիններում ծառայության ընդունվող և ուսումնական հաստատությունում առկա ուսուցման ձևով սովորող քաղաքացին պաշտոնի նշանակվելիս պարտավոր է ապահովել սույն մասով նախատեսված պահանջի կատարումը՝ պետական լիազոր մարմին ներկայացնելով հեռակա ուսուցման ձևի անցնելու վերաբերյալ փաստաթղթերը:

Հոդված 45. Ուսումնական ծախսերի փոխհատուցումը

1. Ուսումնական հաստատություն սովորելու կամ վերապատրաստվելու գործուղված ծառայողը պարտավոր է փոխհատուցել իր սովորելու կամ վերապատրաստվելու համար պետության կատարած ծախսերը, եթե նա՝

1) առանց հարգելի պատճառների, ինքնակամ դադարեցրել է ուսումը կամ վերապատրաստումը կամ հեռացվել է ուսումնական հաստատությունից.

2) սույն օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ, 8-9-րդ, 12-14-րդ կետերով և 1.1-ին մասով նախատեսված հիմքերով արձակվել է ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից.

3) ծառայությունից արձակվել է սույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով, բացառությամբ ընտանեկան հանգամանքներով պայմանավորված դեպքերի, եթե նշված հանգամանքները հիմնավորվում են անհրաժեշտ փաստաթղթերով և պետական լիազոր մարմնի ղեկավարի կողմից գնահատվում որպես ծառայությունը շարունակելու համար խոչընդոտ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում ազգային անվտանգության մարմինների ծառայողը չի հատուցում սովորելու կամ վերապատրաստվելու համար պետության կատարած ծախսերը, եթե նա՝

1) ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ազգային անվտանգության մարմիններում ծառայել է ոչ պակաս, քան հինգ տարի կամ վերապատրաստումն անցնելուց հետո ծառայել է ոչ պակաս, քան երկու տարի.

2) ծառայությունից արձակվել է սույն օրենքով նախատեսված հիմքերով (բացառությամբ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսվածների):

3. Սովորելու կամ վերապատրաստվելու համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը սահմանվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

4. Ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնելու համար «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորությունը խախտվելու դեպքում զինծառայողը վճարում է տուժանք***, ինչպես նաև հիպոթեկային վարկավորման պայմանագրի հիման վրա պետական բյուջեի հաշվին իրականացված վճարումների ամբողջ գումարը*** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

Հոդված 47. **Ազգային անվտանգության մարմինների ծառայողին ծառայությունից արձակելու հիմքերը**

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը ենթակա է ծառայությունից արձակման՝

1) տարիքի կապակցությամբ՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայության մեջ գտնվելու և սահմանային տարիքի հասնելու դեպքում.

2) օրենքով սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

4) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ծառայության համար ոչ պիտանի կամ սահմանափակ պիտանի ճանաչվելու դեպքում.

5) ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնում ծառայությունը շարունակելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում, ~~եթե համաձայն չէ նշանակվելու այլ պաշտոնի.~~

6) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

7) ***(կետն ուժը կորցրել է 24.11.22 ՀՕ-448-Ն)***

8) իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

9) հաստիքների կրճատման դեպքում, եթե համաձայն չէ նշանակվելու այլ պաշտոնի.

10) ***(կետն ուժը կորցրել է 01.03.23 ՀՕ-40-Ն)***

11) իր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ այլ աշխատանքի անցնելու կամ ընտանեկան հանգամանքների կապակցությամբ.

12) կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե համաձայն չէ նշանակվելու առաջարկվող պաշտոնին.

13) համապատասխան կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում.

14) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելու դեպքում.

15) զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում:

1.1. Լիազոր մարմնի ղեկավարն իրավունք ունի ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակելու դիտավորյալ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած այն ծառայողին, որի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով: Այս դեպքում լիազոր մարմնի ղեկավարի կողմից որոշում կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով ազգային անվտանգության մարմինների ծառայողը ծառայությունից կարող է արձակվել, եթե ծառայողին առաջարկվել է իր առողջական վիճակին, ինչպես նաև անձնական ու գործնական հատկանիշներին, կրթությանը և զբաղեցրած պաշտոնի խմբին համապատասխանող այլ պաշտոն, իսկ ծառայողը հրաժարվել է առաջարկված պաշտոնից: Համապատասխան պաշտոնի բացակայության դեպքում ծառայողն արձակվում է ծառայությունից առանց այլ պաշտոն առաջարկելու:

2. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին ծառայությունից արձակում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավունք ունեցող ղեկավարը:

Ազգային անվտանգության մարմիններից արձակվող ծառայողն արձակվելու օրը ստանում է վերջնահաշվարկ:

3. Ազգային անվտանգության մարմիններում 20 և ավելի տարի (արտոնյալ հաշվարկով) անբասիր ծառայած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանն առանձնակի ծառայություններ մատուցած սպաներին և ենթասպաներին, անկախ ազգային անվտանգության մարմիններում ծառայության ընդհանուր ժամկետից, արձակելու իրավունք ունեցող ղեկավարի հրամանով կարող է վերապահվել զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Ազգային անվտանգության մարմինների բարձրագույն կոչում ունեցող ծառայողները ծառայությունը դադարեցնելուց հետո իրավունք ունեն կրելու զինվորական համազգեստ:

~~Հոդված 52. Ազգային անվտանգության մարմինների ռազմաբժշկական հանձնաժողովը~~

~~Լիազոր մարմնի ղեկավարը ձևավորում է ռազմաբժշկական հանձնաժողով, որի ձևավորման ու գործունեության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

<u>Հոդված 52. Ազգային անվտանգության մարմինների ռազմաբժշկական հանձնաժողովը</u>

<u>1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության ընդունվող անձանց և ազգային անվտանգության մարմինների ծառայողների առողջական վիճակի հետազոտման և ռազմաբժշկական փորձաքննության գործառույթն իրականացնում է լիազոր մարմնի կազմում գործող ռազմաբժշկական հանձնաժողովը, որի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից:</u>

Հոդված 53. Ազգային անվտանգության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք

1. Ազգային անվտանգության մարմիններում աշխատանքի են ընդունվում նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

<u>2. Ազգային անվտանգության մարմինների քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վերաբերյալ թղթային եղանակով վարվում են անձնական գործեր, որոնցում արտացոլվում է նրանց աշխատանքային գործունեության ընթացքը: Անձնական գործի ձևը և վարման կարգը հաստատվում են լիազոր մարմնի ղեկավարի հրամանով</u>